կրօնական և փիլիսոփայական սիստեմները, տալով նորանոր մեկնութիւններ և լուսաբանութիւններ։ Եւ մենք ժամանակակից սուրբ հայրերի գրուածքներում և ճառերում նշմարում ենք հետքերը այն մտաւոր գործունէութեան, որ անցնում էր նրանցից իւրաքանչիւրը իր նախապատրաստական աշակերտական տարիներում։

«Դժբաղդաբար մեր երկիրը անկարող էր հանգիստ սրտով և անդորր կենցաղով ապրել, որովհետև Միջին Ասիայից եկող արշաւանքները հիմնայատակ էին անում ամեն մի կուլտուրական սկզբնաւորութիւն։ Բայց երբ տառապանքների շարանը փոքր ինչ թուլանում էր և մեր երկիրը փոքր ինչ հանգիստ էր վայելում, նորից սկսվում էր գրերի վերածնող, վերանորոգող, վերակազդուրող գործը։

«Այդպէս մենք ունեցանք վերածնութեան շրջաններ Բագրատունեաց հարստութեան ժամանակ, Ռուբինեանց և Խաչակիրների օրերով, տասնեօթներորդ դարի և մխիթարութիւնների ժամանակ սկսված խաղաղ գործունէութեան օրերով Վենետիկի և Վիէննայի միաբանութիւնների հաստատման և գործունէութեան շրջաններում, Հնդկաստանի, Պոլսի, Մոսկվայի լուսաւոր շարժման սկզբնաւորութեան և կովկասեան արթնութեան արշալոյսային շարժման օրերում։

«Գրերի դերը վերածնութեան գործում այժմ աւելի քան անցեալում ունի խոշորագոյն պայծառաշող ճանապարհներ իր առաջ։ Նա ունի իր առաջ լուսաւոր մարդկութեան արած հսկայական առաջխաղացութիւնը, իբրև փարոսաճաճանչ մի հրաշափառ օրինակ։ Եւ մենք պէտք է ամբողջ մեր եռանդով և ոգևորութեան աւիւնով քայլենք դէպի վերածնութեան այն վեհագոյն անդաստանը, որ խոստանում է բիւրաւոր բեղուն արդիւնքներ ժողովրդի համար։

«Վերածնութիւն ընդարձակ ծաւալով, վերածնութիւն գաղափարական կատարելութեան համար, վերածնութիւն ժողովրդական բարօրութեան և բարգաւաճման համար։

«Գիրը կոչված է այդ վերածնութեան գործը դիւրացնելու և աջողեցնելու։

«Ուխտենք գործելու վերածնութեան ասպարէզում»։

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

—

(Ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսին)

Մոսկվա, 13 հոկտեմբեր

Մոսկվայի հայոց եկեղեցական խորհուրդը ուրախութեամբ և յուսով միանում է մտքի յաղթութեան և ազգային քաղաքակրթութեան յաղթանակի համազգային յոբելեանի տօնին և շնորհաւորում է Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին և բոլոր Նրա հօտը յոբելեանական աշխատանքների սկզբնաւորութիւնը, ցանկանալով լիակատար աջողութիւն Կենտրոնական Յանձնաժողովի օգտակար ձեռնարկութիւններին, որոնք նպատակ ունեն ապահովել ազգային դպրոցի և գրականութեան ապագայ զարգացումը։ Խորհուրդս մաղթելով, որ ձեր կոչը արձագանք գտնէ ամենուրեք հայոց մէջ, զգում է, որ ինքը ոչ պակաս պարտական և պատրաստ է աջակցել ձեզ, քան բոլոր միւս եղբայր - հիմնարկութիւնները։

Նախագահող Ստ. Տէր-Սարգսեան

—

Թիֆլիս, 13 հոկտ.

Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութիւնը հայկական այբուբենի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի առիթով անկեղծօրէն իղձ է արտայայտում հայ գրականութեան և կուլտուրայի անդրագոյն բարգաւաճման և ծաղկման համար։

Նախագահ խորհրդի՝ Ս. Յարութիւնեան

—

Բագու, 13 հոկտ.

Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան նախաձեռնութեամբ կազմված Յոբելեանական Յանձնաժողովը կազմակերպելով այսօր գրական - ձայնական երեկոյթ հայկական գրերի գիւտի 1500-ամեակի և 400-ամեակի առիթով, որդիական ակնածութեան զգացումով հայցում է Ձեր Սրբութեան հայրական օրհնութիւնը և արտայայտում է իղձեր, որ լիակատար աջողութեամբ պսակվէ ձեր բարի ձեռնարկութիւնը հայ ժողովրդի կրօնական - բարոյական դաստիարակութեան ռահվիրաների բարգաւաճման համար։

Յոբելեանական Յանձնաժողով

—

Ալէքսանդրօպոլ, 13 հոկտ.

Ազգային մեծ յոբելեանի հանդիսաւոր տօնախմբութեան օրը, Ալէքսանդրօպոլի հոգևոր վարչութիւնը և ամբողջ հօտը մատուցանում է Ձեր Սրբութեանը իր սրտագին շնորհաւորութիւնները, աղօթելով Աստուծուն՝ պարգևել Ձեր Սրբութեանը լիակատար աջողութիւն ընթանալ ս. Սահակի և Մեսրոպի ընդգծած շաւղով՝ ի բարգաւաճումն հայ գրականութեան և դպրոցի։

—

Բագու, 13 հոկտ.

Կովկասի աւագագոյն լուսաւորական-բարեգործական հիմնարկութիւն՝ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը խորին հիացման զգացմամբ խոնարհվելով սուրբ հայրեր Սահակ և Մեսրոպ և Թարգմանչաց, ինչպէս և հայ տպագրութեան առաջին աշխատաւորների յիշատակի առաջ, միանում է ընդհանուր ցանկութեան, որ նորից վերածնվի հայ գրականութեան և կուլտուրայի ոսկեդարը։

Նախագահ՝ Միքայէլ Պապաջանեան

—

Թիֆլիս, 13 հոկտ.

Ներաշէնի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցչութիւնը և աշակերտութիւնը հոգեզմայլման խորին զգացումով դէպի եկեղեցու հայրերը, որոնք տուին այբուբեն՝ մայրենի լեզուով լսելու ս. Գրոց ընթերցումը, և դէպի տպագրութեան վաստակաւորները, արտայայտում են Ձեր Սրբութեան անկեղծ շնորհաւորութիւններ հայերի կուլտուրական վերածնութեան այդ հազուագիւտ հանդէսի համար։

Աւագ-քահանայ Շիօյեան և հոգաբարձու Քիշմիշեան

—

Սղնախ, 13 հոկտ.

Սղնախի հայ հոգևորականութիւնը, հասարակութիւնը, հոգաբարձութիւնը և ուսուցչական մարմինը յղում են սրտագին շնորհաւորութիւններ հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով. կատարվեց հանդիսաւոր եկեղեցական թափօր և հոգեհանգիստ հանգուցեալ վաստակաւորների յիշատակին։ Դպրոցի ֆոնդը ընդունված է համակրութեամբ։

Գործակալ՝ տէր-Եղիշէ

Նախագահ հոգաբարձութեան՝ Ենիկոլոպեան

Աւագ-ուսուցիչ՝ Ղազարեան

—

Ղաթարի Հանք, 13 հոկտ.

Կովկ. Հայոց Բար. Ընկերութեան Ղաթարի ճիւղը շնորհաւորում է հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի տօնախմբութիւնը և ցանկանում է ամբողջ հայ ժողովրդին բարգաւաճումն կուլտուրայի մէջ։

—

Թիֆլիս, 14 հոկտ.

Երէկ, տօնախմբութեան առիթով, ծխական դպրոցների ամբողջ ուսուցչական մարմինը, աշակերտները, աշակերտուհիները ներկայ եղան Վանքի եկեղեցում հոգեհանգստին և հայրապետական մաղթանքին։

Թեմական տեսուչ՝ Տէր-Միրաքեան

—

Երևան, 13 հոկտ.

Համակված երկիւղածութեամբ իր մեծ վերածնիչների յիշատակի առաջ՝ ի դէմս Ձեր Վեհափառութեան շնորհաւորում եմ եկեղեցուն՝ ազգային յոբելեանի համար։

Յ. Սաղաթելեան

(Կը շարունակվի)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Գանձակ, 14 հոկտեմբերի

Այսօր քաղաքիս ս. Լուսաւորիչ եկեղեցում պատարագից յետոյ կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ 1500 և 400-ամեակների յոբելեանների առիթով, ապա մաղթանք Նորին Վեհափառութեան արևշատութեան համար։ Պատարագին, հոգեհանգստին և մաղթանքին ներկայ էին քաղաքիս բոլոր հայ հոգևորականութիւնը, խուռն բազմութիւն քաղաքացիների, հայոց ծխական դպրոցների երկսեռ սաները իրանց ուսուցիչ-ուսուցչուհիների և հոգաբարձուների հետ միասին, այլ և պետական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները։ Պատարագի սկզբից ներկայ էին և ռուսաց միջնակարգ դպրոցի տեսչուհի Ն. Մ. Սեմեօնովան և կրօնուսուցիչ համալսարանաւարտ հայր Նեստորը։ Հոգեհանգստից առաջ փոխանորդ հայր Լևոնը զգացված խօսեց տառերի գիւտի և տպագրութեան նշանակութեան և օրվայ հերոս սրբազան հայրերի թողած անմահ գործերի մասին։ Հանդէսը վերջացաւ ցերեկվայ ժամը 1-ին, թողնելով ներկայ եղողների վրա մեծ տպաւորութիւն։ Երէկ, շաբաթ օրը, ամսիս 13-ին դասերից ազատ էին բոլոր ծխական դպրոցների սաները և ս. Յովհաննէս եկեղեցում տօնի առիթով պատարագ մատուցվեց։

Գ. ք. Թ.

II

Կարս, 14 հոկտեմբերի

Նորին Վեհափառութեան կարգադրութեան և էջմիածնի յանձնախմբի տպած և տարածած ծրագրին համաձայն՝ ամսիս 13-ին և 14-ին ս. Աստուածածին եկեղեցում այդ առիթով պատարագ էր։

Մ. ա. ք. Տէր-Պետրոսեանցը թէ 13-ին և թէ 14-ին այդ երկու տօների նշանակութիւնը բացատրեց հանդիսականներին։

Հայոց դպրոցի ուսուցիչները, վարժուհիները և հոգաբարձուները իրանց երկսեռ աշակերտներով ներկայ էին պատարագներին։ Ներկայ էին նաև ռէալական, գիմնազիայի, արհեստաւորաց և քաղաքային դպրոցի հայ աշակերտները իրանց ուսուցիչներով։ Առաջին երեք դպրոցների աշակերտները միայն 13 ի նախատօնակին երևացին։ Իսկ քաղաքային դպրոցի աշակերտները իրանց հայ ուսուցիչներով կիրակի, պատարագից յետոյ, հայոց դպրոցի աշակերտների հետ միացան և գնացին դպրոցը՝ մասնակցելու աշակերտական հանդէսին։ Չը նայելով որ ուսուցիչների ծրագրով այդ օրը միմիայն զուտ աշակերտական հանդէս պիտի լինէր, բայց և այնպէս մի քանի տիկիններ և պարոններ մտել էին հանդիսի դահլիճը և առաջին կարգերում նստել։ Հանդէսը բաց արեց հոգա-